

ՏԱՄՆ ԵՒ ՎԵՏԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

ՆԵՐԿԱՅ 1888 ԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մենք ստանում ենք սեփական
ՀԵՌԱԳԻՐՆԵՐԻ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, վեց ամսվանը 6 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների մի-
կիւնում, Թամաշեկի տանը):
Կայսերութեան ուրիշ քաղաքներէ «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է գիտնել հետևեալ հա-
ցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

Այսօր, Հինգշաբթի, Համբարձման օրը, յունիսի 2-ին, խօշի-վանքի վերեզ-
մանատան եկեղեցում կը կատարվի հանգուցեալ մատենագիր ՐԱՅՖԻԻ քառասուն-
ութայ հոգեհանգիստը: Պատարագը կը սկսվի ձիշդ ժամը 11-ին:

Դաւիթ, իվան, Ալեքսանդր և Սօֆիա Ստեփանեան Բեղիղանալիս և Պետր
Դաւիթովի Բեղիղանալիս, ցաւով սրտի յայտնում են բարեկամներին և ծանօթնե-
րին, առաջինները իրանց հօր, իսկ վերջինը իր եղբոր՝ զէյսովիսին ստատակի
սովէտնիկ ՍՏԵՓԱՆ ԴԱՎԻԴՈՎԻԶ ԲԵՂԻԳԱՆՈՎԻ մահուան մասին: Յուզարկաւորու-
թիւնը կը լինի առաւօտեան ժամը 11-ին, շաբաթ, յունիսի 4-ին, հանգուցեալի
բնակարանից, որ գտնվում է Սպարանայա փողոցում, տուն ՁԵ 54, դէպի Միջին-Փո-
ղոցում գտնվող կաթօլիկների եկեղեցին:

ԲՈՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մամուլի միջազգային կոնգրէս. — ՆԵՐԿԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Խօսքովի գործը. Սուրբապետի գաւա-
ռի դրութիւնը. Նամակ Սոգոմից. Նամակ Խըմ-
բագրին. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր. —
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անատոլի Պալմերի մի
օրինակով. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. —
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՏԱՐԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՄԱՄՈՒԼԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ

Երէկ ստացանք «Մշակ» խմբագրի ա-
նուշով մի հրաւեր փարիզից՝ եկող 1889
թ.ին Ֆրանսիայի մայրաքաղաքում լինելի
«Մամուլի միջազգային կոնգրէսին» մաս-
նակցելու: Հրաւերը ստորագրել է կոնգրէ-
սի մշտական քարտուղար, պ. Ժիւլ Լէրմի-
նա:

Դեռ 1878 թ.ին, հանգուցեալ Վիկտոր
Հիւգոյի նախաձեռնութեամբ հիմնվեցաւ
փարիզում «Գրական և գեղարուեստական
միջազգային» ընկերակցութիւնը: Այդ ըն-
կերակցութիւնը տաս տարվայ ընթացքում
կոնգրէսներ էր կազմակերպում, զվարճա-
պէս նպատակ ունենալով պաշտպանելու
հեղինակների իրաւունքները: Այդ իրա-
ւունքները վաւերացվեցան Բեռլին քաղաքում
կայացած կոնգրէսով:

Մամուլի առաջին կոնգրէսը 1878 թ.ին
փարիզում էր, այնուհետեւ, տաս տարվայ
ընթացքում նոյն կոնգրէսը ամեն տարի
կայանում էր Եւրոպայի նշանաւոր քաղաք-
ներէն: 1879 թ. Լոնդոնում, 1880
թ. Լիսաբոնում, 1881 թ. Վիեննայում,
1882 թ. Հռոմում, 1883 թ. Ամստերդա-
մում, 1884 թ. Անտվերպէնում, 1885 թ.
Բրիւսէլում, 1886 թ. Ժընէվում, 1887 թ.
Մադրիդում, 1888 թ. Վենեցիա-
յում, վերջապէս եկող 1889 թ.ին, փարի-
զի համաշխարհային ցուցահանդիսի ժա-
մանակ կը կայանայ փարիզում:

Մամուլի միջազգային կոնգրէսը բաց կը

լինի ամբողջ աշխարհի քիչ թէ շատ նշա-
նաւոր քաղաքների և պարբերական հրա-
տարակութիւնների ներկայացուցիչներին,
առանց խորութեան ազգութեան և լեզ-
ւի: Նրա գործունէութեան պրոգրամը
կամօքի այն բոլոր հարցերը, որոնք հե-
տաքրքրում են մամուլը թէ մտաւոր և
թէ նիւթական ու գործնական կողմից:
Կոնգրէսը զվարճաւորապէս նպատակ կունե-
նայ ուսումնասիրել այն սկզբունքները, ո-
րոնցով պէտք է ղեկավարվեն զանազան
երկրների լրագրութեան փոխադարձ յա-
րաբերութիւնները:

Կոնգրէսը այլ և այլ հետաւորութիւններ է
տալիս իր մասնակցողներին թէ ճանա-
պարհածախսի և թէ փարիզում կենալու
ժամանակ անելի ծախսերի վերաբերմամբ:

Մեր դարը նշանաւոր է իր ձգտումով
հաստատել ընդհանուր համբարշտութիւն
և միջազգային բարոյական սերտ կապեր
այն բոլոր համանման գործիչների մէջ, ո-
րոնք ամեն տեղ և ամեն երկրում ձգտում
են մի և նոյն նպատակին: Մամուլը քա-
ղաքակրթութեան երկրներում ահագին ոյժ է և
անհրաժեշտ հաստատութիւն է: Մամուլը
ազգերի լուսաւորութեան, ազգերի քաղա-
քակրթութեան ամենագործող գործիչներից
մէկն է: Մեզ համար, ի հարկէ, մեծ պա-
տիւ է հրաւիրված լինել քաղաքակրթութեան
ազգերի մամուլին մեծ ընտանիքի աշխա-
տութիւններին և ձգտումներին մասնակցե-
լու: Եթէ Աստուած կը տայ, մենք, ի
հարկէ, մեր պարտաւորութիւնը կը հա-
մարենք եկող 1889 թ.ին մասնակցելու
փարիզում կայանալի մամուլի միջազգային
կոնգրէսին, ոչ այնքան մեր լծը ձայնով
խորհրդակցելու և որ և է կշիռ ունենալու
վիճաբանութիւնների մէջ, որքան ուսում-
նասիրելու մամուլի կենսը Եւրոպայում:
Մեր մամուլի դրութիւնը, ի հարկէ, դեռ
ևս շատ հեռու է քաղաքակրթութեան երկրնե-
րի մամուլից և մենք դեռ ևս շատ բան
պէտք է սովորենք Եւրոպացիներից:
Կոնգրէսի մասնաժողովի նախագահների

և մշտական անդամների թւում գտնուում
ենք յայտնի անուններ, ինչպէս օրինակ՝ Է-
միլ Զփէ, Նիւմա Դրօզ, Լուի Ուլբախ,
Արման Գիւմարէսկի, Ժիւլ Լէրմինա և այլն:
Մեզ ուղարկված նամակի տակ, մեծ
տառերով յայտնված է, որ ամեն խմբագիր,
որը հրաւիրվում է մասնակցել կոնգրէսին,
կարող է պատասխանել կոնգրէսին՝ մաս-
նակցելու իր ցանկութեան մասին, իր
մայրենի լեզուով:

Գ. Ա.

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՈՍՐՈՅՎԻ ԳՈՐԾԸ

Վերջապէս երկուշաբթի, մայիսի 30-ին, Խոս-
րօսիվի գործը վերջացաւ: Երեկոյան ժամը 9-ին
դատարանը, կարճատև խորհրդակցութիւնից յե-
տոյ դուրս բերեց հետևեալ վճիռը. Թիֆլիսի եր-
րորդ բաժնի հաշտարար դատարարի նախկին օգ-
նական, գուբերնսկի սեկրետար Ալեքսանդր Խոս-
րօսիվ, 40 տարեկան, կամենալով իր տան իրերը
կրակ գցելով ձեռք բերել «Եւալոր» ընկերութիւ-
նից ապահովագրական փողերը, նա 1887 թ.ի
յուլիսի 23-ին, Թիֆլիսում գտնվող բնակա-
րանում, որ գտնվում է Միրիմանեանցի տանը և
որի մէջ գտնվում էր նրա ապահովագրած կապե-
րի մի մասը, պատրաստեց զանազան իրերից
նաւթով սրկած մի կտոր, վառեց նրան և ինքը
անյայտացաւ բնակարանից: Մեղադրեալի այդ ա-
րարմունքից հրդէս առաջացաւ, որը հանցքին
կողմնակի անձինք, վերջինեալ վարմունքի
մէջ Խոսրօսիվ մեղաւոր ճանաչվելով, զրկ-
վում է իր բոլոր իրաւունքներից և ենթարկվում
է ութ տարի տաժանակիւր աշխատանքների, որից
յետոյ մինչև մահ պիտի ապրի Սիբիրում: Սար-
գիսովի օգտին վճռվեց առնել Խոսրօսիվից 160
րուբլի, իսկ Միրիմանեանցի քաղաքացիական
պահանջը թողնել առանց հետևանքի: Վճիռը
յայտնվեց յետոյ դատարանի հրամանով Խոսրօ-
սիվ անմիջապէս կալանաւորվեց և ուղարկվեց զի-
նուորական բաժնի:

Կորգանովի գործից յետոյ Թիֆլիսում ոչ մի
գործ այնքան աղմուկ չէր հանել, ինչպէս Խոս-
րօսիվի գործը: Մեղադրեալը պատկանում էր Թիֆ-
լիսի բաւական ունեւոր ընտանիքին, նոր էր պե-
տակել, կին ունենւում Թիֆլիսի յայտնի տնից,
որը իր հետ բերել էր բաւական օժիտ: Խոսրօսիվ
էր ան տաներկու տարի է, որ կատարում էր քըն-
նիչի պաշտօնը, և այդ պաշտօնի մէջ նա իրան
բաւական ճարտիկ էր ցոյց տուել: Վերջին տաս
տարիներում բոլոր բարդ գործերը զրեթէ միշտ
յանձնվում էին նրան: Նրան էր յանձնված և մի
ժամանակ բաւական աղմուկ հանած կեղծ թղթ-
թաղարմները գործը, որի մէջ խառնված էին եր-
կու հայ վարդապետների: Խոսրօսիվ, որի պարտա-
կանութիւնն էր յանձնընկեր անպատիժ չը թող-
նել, ահա ինքը մեղադրվում է մի այնպիսի յան-
ցանքում, որը ամենազգրեթիւններից է համար-
վում: Իրաւագետների դատը վրձնված էր, որ
նրանց միջից մի այդպիսի յանցաւոր է դուրս ե-
կել, և այդ դատի մէջ տիրում էր ընդհանուր
զայրոյթ Խոսրօսիվի դէմ: Վերև ասածներով հնչող
է բացատրել գործի ելքի մասին տիրած ընդհա-
նուր հետաքրքրութիւնը: Դատի վերջին օրերին
դատարանում մի ընդհանուր իրարանցում էր տի-
րում: Հասարակութիւնը լցրել էր նահանգական
դատարանի քրեական մասի ամբողջ շինութիւնը,
բայց տեղի սակաւութեան պատճառով շատ քի-
չերն էին կարողանում մտնել դահլիճը: Դահլիճ-
նում, ինչպէս ասում են, ասեղ գցելու տեղ չը
կար: Նստած էին դէպի դատարանների սեղանը
տանող աստիճանների և մինչև անդամ մեղա-
դրեալների աթոռի վրա: Հետաքրքրութիւն էր
շարժում մասնաւոր պրօկուրօրի՝ ճառը, որը ա-
ռաջին անգամն էր խօսում Թիֆլիսում: Նա իր

ճառը բաժանեց երեք մասի. առաջին մասում
նա հաստատում էր, որ Խոսրօսիվ բնակարանում
գիտմամբ է կրակ գցել և թէ այդ բանը ուրիշ
ոչ ոք չէր կարող անել բացի Խոսրօսիվից: Իր
ճառի երկրորդ մասում նա բացատրեց, որ Խոս-
րօսիվ այդ արել է այն պատճառով, որ նրա նիւ-
թական գործերը լաւ դրութեան մէջ չէին և նա
կամենում էր իր նիւթական միջոցները վերա-
կանգնեցնել այդ հրդեհով քանի որ նրա տան
իրերը շատ բարձր գնեւոր ապահոված էին
«Եւալոր» ընկերութեան մէջ: Եւ վերջապէս
իր ճառի վերջում նա հաստատեց, որ Խոս-
րօսիվ այդ յանցանքը կարող էր գործել, քանի որ
բարոյապէս նա ընկած էր և յարաբերութիւններ
ունէր զանազան մոլթ աւանաւորութիւնների
հետ: Պաշտպանը իր ճառում ընթանում էր նոյն
կարգով, մի առ մի հերքելով պրօկուրօրի ասած-
ները: Գործը, ի հարկէ, այս ձևով չի վերջանալ:
Խոսրօսիվ անմիջապէս գործը կանցկացնի պալա-
տը: Այդ մասին իր ժամանակին կը յայտնենք:

ՍՈՒՐԲԱՆՈՒ ԳԱՒԱՌԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Ահա մի քանի տարի է, որ Սուրմալու գաւառի
ժողովուրդը աւելի ու աւելի վատթար տնտեսա-
կան ճգնաժամի մէջ է ընկնում: Անցեալ տարի,
մարտի վերջերս, Արաքսը յորդանալով՝ ողողեց
իր շուրջը գտնված ցանած դաշտերը. չանցաւ մի
քանի շաբաթ՝ մայիսի 11-ին, սարսափելի մեծու-
թեամբ եկած կարկուտը միանգամայն ողնացրեց
տեղիս այդներն ու բամբակներից մեծ մա-
սը: Բայց և այնպէս Սուրմալուն չաղքատացաւ,
որովհետեւ թէ ցորենների և թէ բամբակների
մի մասը մնացին անվնաս և շատ մարդիկ կա-
րողացան 200—300 խալվար ցորեն ամբարներ:

Այս տարի ժողովրդի դրութիւնը աւելի կրի-
տիկական է. ցորենները սկսել էին նոր հասակ
բռնել, առօրինակ լցնել, երբ անդադար յորդա-
ռատ անձրևներ տեղացին. բամբակ ցանելու ժա-
մանակն անցնում էր (բամբակ ցանում են սոփո-
րաբար մարտի վերջերից մինչև մայիսի 10—
15-ը), երբ մէկ կամ երկու օր արև էր անում և
գետինը սկսում էր սարսափել, դիւղացիք ուրա-
խացած դուրս էին գալիս դաշտը բամբակ ցանե-
լու. բայց դեռ ցանքը չը վերջացած սարսափելի
կերպով անձրև էր տեղում: Բամբակը ցանելուց
յետոյ նրան պէտք է տալանել—կոշտ կտոր հո-
ղերը մանրացնել և հաւասարեցնել, որպէս զի
բերքը լաւ լինի, սակայն անձրևը մէկ օր ժամա-
նակ չէր տալիս տալանելու: Գիւղացին վիզը
ծռած, ձեռքը ծոցին՝ սպասում էր տեսնել, թէ
այս բոլորի վերջը ինչ կը լինի:

Չը նայելով անձրևներին, գիւղացին մեծ յոյս
ունէր թէ հաջաբոյսերի և թէ խաղողի ու այլ
պտուղների վրա.... բայց յոյսերն ի դերն ելան.
Արաքսը ըստ սովորականին բարձրանում է և
քանդելով իր ափերի մի մասը, մէկ ճիւղն ար-
ձակում է դէպի Մալաթլու, ինչիւրաբար, Խզըր և
Արշալ ու սոցա դաշտերի ամենապտղատու մա-
սը ծածկում է տիղմով: Դեռ այս դրոյժ հազիւ
էր հասել մեզ, երբ ամսիս 23-ին ճաշից յետոյ
ժամի 3-ից սկսեց սարսափելի որոտ ու կարկուտ
կարկուտան եկել է հետևեալ գիւղերի վրա՝ Խզըր,
Խզըրլաղ, Ամարաթ և այլն: Կարկուտի քանակու-
թիւնը սարսափ է աղբում լսողի վրա. նա դաշ-
տի վրա նստել է 5 վերջով հաստութեամբ: Էւ-
ջիւրեք երկրորդ օրը իրանց գիւղից կարկուտներ
էին բերել Խզըր, որոնց ամեն մէկը 5—6 լօտ
էր կշռում: Նոյն գիւղացիք ասում էին, որ կար-
կուտի հարուածից դաշտում սպանվեցաւ մի
կին:

Վնասը դեռ ճիշդ յայտնի չէ, բայց հաւանա-
կան է որ 100.000-ից աւելի լինի: Ամսիս 24-ին,
առաւօտեան, ամենքը դուրս էին եկել դաշտ, որ
տեսնեն թէ իրանց յոյս ու ապակէն ցանքերը

Թնչալէս կարեւոր կտորներէ տակ ոչնչացել են...

Ամբողջ դաշտը ծածկված է սառուցով, ծառերը տերեւաթափ, այդինքն մէջ խաղողի վաղի չոր արմատներն էին մնացել, արտերը խողանք են նմանում, հասկերը կտրատված թափված են, միայն ցորեններն են կանգուն մնացել, բամբակները միանգամայն ոչնչացել են, դաշտերում և դառն ոչնչանալով բաւականաչափ կտորով են մի խօսքով ամեն ինչ, որ գիւղացու ապրուստի ամենագլխաւոր պայմանն էր կաղնու, ոչնչացած է:

Ինչ է անելու խնդր գիւղացին... ոմանք իրանց ապրուստը գտնում էին ցորենով, նա այլ ևս չը կայ, ոմանք բամբակով, այն ևս չը կայ, ոմանք առատ խաղողի վրա էին յոյս դրել, այդ յոյսն էլ խորտակվեցաւ. ամեն մի գիւղացու արտից արհեստ է կաթում, ամենքը աղիոտորմ լալիս են. «Ինչ է լինելու մեր ճարը», — այս է բոլորի արտասանածը...

Գաւառապետը երէկ առաւօտ անձամբ գնալով դաշտ, ահանառեւ եղաւ գիւղացիներէ թշուառութեան և խոտորացաւ շուտով բերել տալ կորեկը՝ ցանկելու համար, իսկ ցորենը՝ ժողովրդին ցըրվելու համար:

Պէտք է աշխատել գիւղացուն շուտափոյթ օգնութիւն հասցնել, ապա թէ ոչ վաշխառուներն օգտվելով ներկայ հանգամանքից, գիւղացուն միանգամայն իրանց ստորակ կը դարձնեն:

Բ.

ՆԱՄԱԿ ՄՈՋԻՕԿԻՑ

Մայիսի 25-ին

Հայերիս մէջ օտարոտի չէ այն երեւոյթը, երբ մի որ և է հանձարեղ հրապարակախօս, մի որ և է անկեղծ մարդ, մի որ և է առողջադատ անհատ սրտի ցաւօք հրապարակում է իր ազդի կամ իր ժողովրդի անմխիթար պակասութիւնները և թեւորութիւններն՝ առաջարկելով մի և նոյն ժամանակ վերաբուժական դարմաններ, երբ նա անխաղձ արտաբերում է ազդային ասպարեղում գործողների ղեղձումները նրանց ուղղելու նպատակով, — փոխանակ ամբողջ համակրութիւնը և խրախուսող վայելելու, ենթարկվում է դանազան խաւարասէրների հալածանքի, զրպարտութեան և դաւաճանութեան Այդ ամբողջ որով հայերս խաղաղ վարակված ենք, բայց որը վաղուց հարկաւոր էր արմատախիլ անել, աւելի ժողովրդականութիւն է ժառանգել այնտեղ, ուր հասարակութիւնը դեղերով է ապիական տգիտութեան ցեխի մէջ: Այդպիսի ողորմելի քաղաքների կարգին բաղդ ունի պատկանելու և Մօզդոկը:

Հասարակաց գործերը այժմ մեր մէջ իւրաքանչիւր պաշտօնավարի սեփականութիւն են դարձած: Թոյլ տուր քեզ օտոնել հասարակական մի որ և է հաստատութեան, համարձակվիլ հետաքրքրվել նրա գործունէութեան, յայտնի լրագրութեան մէջ ներառ վարչութեան մասին ունեցած քո հակակիր կարծիքները, — ինչոյն ամեն կողմից բղաւոց, ճգաւոց, հայտնաք ականջներդ կը խլացնեն ֆեղ օրինակ, Թիֆլիսի Վառլոյնց եկեղեցու պ. երեցփոխ Աբիման, որը իր նոր միջոցով օրինակ դարձաւ գաւառական քաղաքների համար. յիշաւի անկեղծ պէտք է ասել, որ «Մշակի» առաջնորդողը մեծ տպաւորութիւն գործեց իր ազատամիտ լուրջ քննադատութեամբը. կրկնում ենք, «Մշակի» № 55-ի «Կաւառներ» և «Թիֆլիս» առաջնորդող յօդուածը, կարծես գուշակելով՝ բաշ ըմբռնել էր, թէ գաւառական քաղաքների պ. պ. երեցփոխները քնն օրինակ վերցրին Թիֆլիսի յայտնի, այժմ հայի չը ներկայացնող պ. Աբիմանից... Ահա մի այդպիսի օրինակ, որ կատարվեցաւ տեղաւ «Մշակի» № 53-ի մէջ լոյս տեսաւ մի լուր Մօզդոկից, լրատուն գրում էր. «Ս. Աստուածամօր և ս. Գեորգ եկեղեցիների երեցփոխ պ. Թուշմալեան հրաժարվում է հայի տաւոր: Յայտնի է, որ յիշեալ պարոնի մօտ եկեղեցական մի խոշոր գումար կայ, որի ինչ կերպով գործադրելու մասին շատ քիչ է յայտնի: Վերոյիշեալ լրատուին մենք չենք ծանաչում, բայց նրա գրածը զուտ ճշմարտութիւն է. յիշաւի այդ լուրը զարկեցրեց շատ շատերին ժողովրդականներից. վճռեցին վերջնականապէս հայի. պահանջել Պ. երեցփոխ Թուշմալեան, ճարը կտրած, հայի տոււց, նախ և առաջ հաշտեաներին և՛ ապա ընդհանրապէս ժողովրդին. պ. պ. հաշտեաները բացակայ էին, երկի ամօթից... Հաշտից երեցեաւ, որ պ. երեցփոխը

6,500 ռուբլի ծախսել էր, հանդերձ ինն տարվայ տոկոսներով. եթէ այդ յայտնի գումարի տոկոսն էլ հաշուելու լինենք, ուրեմն ահապէս գումար է կորել մեր պ. երեցփոխի շնորհով, այն ինչ կոնսիստորիայի հրամանով երեցփոխները իրաւունք չունեն 300 ռուբլուց աւելի առձեռն դրամ ունենալը: Սկզբից «Մշակի» լրատուին քիչ մնաց, որ քարկօծէին, իսկ այժմ հասարակութիւնը հասկացաւ ու ըմբռնեց լրատուի զուտ ճշմարտութեան միտքը: Մօզդոկիցիները շատ շուտ են տաքանում Այսպէս եթէ մօզդոկիցիներից մի ինքնաձանաչ պատանի, մի անշահասէր երեւտասարդ մամուլի միջոցով հանդէս է հանում մեր թոյլ կողմերը, — ահա մենք նրա յօդուածը լրջօրէն կարդալու, անաչառապէս դատելու և խոհեմութեամբ նրանից օգտվելու տեղ, անմիջապէս ուղղում ենք դէպի խնդր յօդուածագիրը մեր կըրքերի թունաւորելի շանթերը, ճշում ենք նրա անձը բամբակամբի տակ: Երեւելայեցէ, յարգելի ընթերցողներ, պարոնի տրամադրութիւնը, երբ նա գէթ առաջին անգամ հանդիպելով այդպիսի խոչնդոտների՝ ստիպվում է այլ ևս չը գրել... Սակայն, թող չը վնասի այն ազնիւ պարոնը, թող մերկայցնէ մեր պակասութիւնները, որքան ներում են նրա ոյժերը, որովհետեւ ճշմարտութեան պաշտօնեայ լինելն է բարոյական պարտականութիւն ամեն մի անձի, որ ճշնում է «մարդ» անունը կրելու:

Շ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՐՆ

Թիֆլիս, 1 յունիսի

«Քնարիկ մանկական» վերնագրով 27 հատ մանկական ընտիր երգեր ձայնագրելով իտալական նոտաներով և յարմարեցնելով դաշնամուրի վրա, ես անցեալ տարի իմ ստղ միջոցներովս հրատարակեցի մեր հարուստ դասակարգի հայոց գաւառներէ քննող սրտերում մեր մայրենի քաղցրիկ լեզուն արծարծելու և նրանց գեղասիրական ճաշակը զարգացնելու համար: Սակայն, յիշեալ երգարանի լոյս տեսնելուց յետոյ, գաւառական քաղաքներից շատ նամակներ ստացալ, որոնց մէջ խնդրում էին առհասարակ, որ այդ «Քնարիկ» բոլոր երգերը ձայնագրվին նաև հայկական նոտաներով, որպէս զի մեր հայ ծրական-եկեղեցական զարգացնելու ուսուցիչներն ուսանելն էլ կարողանային օգտվել նրանից: Այս իսկ պատճառով, ես արդէն ձայնագրել եմ «Քնարիկ մանկական» երգարանը հայկական ձայնանշաններով: Երգարանը մեծ փոփոխութեան ենթարկելով հարստացրել և ճոխացրել եմ նորանոր բազմաթիւ ընտիր երգերով, որոնց ծաղկաքաղ եմ արել մեր հայ ծիսական զարգացնելու իրեն ձեռնարկ ընդունելով հայերէն լեզուի դասագրքերից: Երգարանը կազմված է Վեհափառ Հայրապետից հաստատված ծրագրի համաձայն I, II և III տարվան համար:

Ա. և Բ. տարվան երգերն կից կը լինեն նաև յայտնի «Ֆրեդեշեան» խաղերը և պարերը, որոնցից ամեն մէկը մանուկներին դուրսեցնելուց զատ, որպէս մի մի մանկական ներկայացումներ՝ նրանց անմեղ սրտերի վրա բարոյակրթիչ ներգործութիւն է անում և ֆիզիքապէս զարգացնում է նրանց մարմնական թոյլ ոյժերը:

Թիֆլիսում առաջին անգամ մանկական պարտիզի հիմնարկող յարգելի տիկին Ս. Բարախան յիշեալ «Ֆրեդեշեան» խաղերի ընտիր տեսակները կարելի դնելով խոտացել է տալ ինձ նորոգութեամբ, ինչպէս գործադրվում էր իր օրինակելի մանկական պարտիզում, հանդերձ խաղերի մանրամասն բացատրութեամբ: Ուստի այս մասին յայտնելով գաւառական ձեռնհաս անձանց, ժրջան ուսուցիչներին և ձայնագրագէտներին, խնդրում եմ խոնարհաբար, որ գաւառական ձայնագրագէտ ուսուցիչները՝ իրենց տեղական հայ ժողովրդական երգերից մի քանի ընտիր տեսակները՝ իրանց իսկական ժողովրդական հարազատ եղանակները անփոփոխ ձայնագրելով, կարելոյն չափ շուտով ուղարկէին ինձ, որով շատ նպաստած կը լինէր գործին: Իւրաքանչիւր 10 հատ ընտիր երգ ուղարկողը, ճիշդաբար կը ստանայ մի-մի օրինակ «Քնարիկ մանկական» երգարանից, որը լոյս կը տեսնէ մինչև առաջիկայ ուսումնական տարին: Երգեր ուղարկողները կարող են դիմել ինձ հետեւի հասցեով. Тифлисъ—на Авлабаръ, священнику Казаросу Овсепьянъ.

Ղաղարոս քահանայ Յովսէփեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՐՆ

Վերին-Աղուլիս, 22 մայիսի

Ձեր պատուական լրագրի № 52-ում, վարդաշէնի պ. լրատուն շօշափում է իմ պատուա մի զրպարտութեամբ, իբր թէ ես պայմանաւորված եմ եղել այնտեղ տուած ներկայացման արդիւնքի կէտը տալ ուսումնարանին: Մրանով յայտնում եմ լրագրից պատուելի ընթերցողներին, որ մեր մէջ այդպիսի պայման գործութիւն չէ ունեցել, ուստի լրատուի կողմից միմեծ սխալանք է, եթէ չափով ստուգվի է. բայց եթէ պ. լրատուն կը յամարի դարձեալ այս մասին գրել՝ իր հնարած սուտը հաստատելու դիտաւորութեամբ, — այն ժամանակ ինձ կը մնայ դատարանին դիմելու, ճշմարտութիւնը հաստատելու համար: Աւելորդ չեմ համարում յայտնել և այն, որ այդ ներկայացումը տրված է 1883 թվ. օգոստոս ամսին և այդ պայմանի համար առաջին անգամն է լրագրի մէջ գրվում:

Պ. խմբագիր, խնդրում եմ չը մերժէք տեղ տալ շոյ տողերին պատուական լրագրից մօտակայ համարներից մէկում, որով ընդմիջտ կը պարտաւորեցնէ ինձ:

Ստեփաննոս Սաֆրազեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԿԵՐ

Այսօր, յունիսի 2-ին Համբարձման տօնը լինելով, տպարանում չեն բանում Այդ պատճառով «Մշակի» շաբաթվայ համարը չենք կարող դուրս բերել, այլ մեր լրագրի № 64 կը հրատարակենք երեքշաբթի, յունիսի 7-ին:

Այսօր, ինչպէս յայտնել ենք արդէն, կատարվելու է Թիֆլիսի խօշիվանքի գերեզմանոցում հանգուցեալ Բաֆֆի բառաստեղի հոգեհանգիստը:

Մեզ խնդրում են մեր քաղաքային վարչութեան ուղարկութիւնը դարձնել այն հանգամանքի վրա, որ մեր հայթիւնները շատ անմաքուր կերպով են պատրաստում հացը: Պատահել է տեսնել որ հացի խմորը հաւնեցելու համար նշանակված տաշտի մէջ մեր փռչիչները լուսանում են ոչ թէ միայն իրանց ձեռքերը, բայց նոյն իսկ և իրանց ոտները: Նորերում Թիֆլիսի բաղանիքներից ոչ հեռու գտնվող մի փռչիչ խանութի առջև հաւաքված ժողովուրդը, ահանառեւ լինելով մի այդ տեսակ զրուելի տեսարանի, յարձակվել էր հացթիւնի վրա և սկսել էր նրան ծեծել: Միայն ոստիկանի միջամտութիւնը ազատեց հացթիւնին ժողովրդի կատաղութեան հետեւանքներից:

Հարունակում ենք բազմաթիւ տեղերից համակներ ստանալ, որոնց մէջ մեզ տեղեկացնում են թէ այս ու այն գիւղում կամ քաղաքում հոգեհանգիստ է կատարվել Բաֆֆի յիշատակին: Այդ տեսակ նամակները այնքան բազմաթիւ են, որ մեզ անհնարին է նրանց գետեղել մեր լրագրի էջերում:

«Մշակի» հետեւեալ համարը կը շարվի յատկապէս մեր լրագրի համար նոր ձուլած տաւերով, քանի որ այն տաւերը, որոնցով մեր թերթը այժմ շարվում է, փոքր ինչ մաշված են արդէն:

Ժողովրդական լուսաւորութեան միջնորդ, մայրաքաղաքի լրագրիների խօսքերին նայելով, ուղարկել է իր ստորագրեալ ուսումնարաններին Գերկաչէվի «Ուսումնարանական աստիճաններ» վերնագրով զբոյ մի քանի օրինակներ և ընթերցանութեան համար կուս Տօլստոյի գիրքը, առաջարկելով որ այդ գրքերից մէկն ու մէկը ապագայում ընդունվի որպէս խրիստոնեայտի, Ուշինսկու խրիստոնեայտի տեղ:

«Новое Время» լրագրում կարդում ենք հետեւեալը. «Կատարութիւնից առաջ եկած մահուան գէպերը, չը նայելով Պատեօրի եղանակով բժշկութեան, աւելի և աւելի շատանում են: Պատեօրի եղանակով բժշկութեան անաշտութիւնը անաշտութեամբ բազմաթիւ փաստեր բերելով, բժշկական լրագիրները նկատում են, որ պատեօրական կայարանները չափազանց մեծ դուրսը են կլանում և ծախված դրամի համեմատ օգուտ չեն բերում: Այդպիսով, օրինակ Պետերբուրգի

կայարանը անցեալ տարում կլանեց մօտ 15,000 ռուբլի, Խարկովի կայարանը, չը նայելով որ խոշոր նպաստ է ստանում, մօտ 5000 ռ. դէֆիցիտ ունի և այն ի նկատի ունենալով այդ, մասնադէտները կարծում են, որ աւելի լաւ կը լինէր Պատեօրի եղանակով բժշկութեան վրա ծախսող գումարները գործածել առողջական ուրիշ պէտքերի վրա»:

Մեր քաղաքի ջրանցքի ջրով դժգոհ բնակիչները կարող են մխիթարուիլ, կարգաւոր Պորտուգալից գրած յօդուածը «Нервиза» շաբաթաթերթում Պորտուգալից խօսքերով, ջրանցքը մինչև անգամ կատարելապէս չէ ապահովել Սամարա քաղաքը ջրհեղից, իսկ ինչ վերաբերում է խմելու ջրին, չը նայելով որ տեղական քիմիկոսները ջուրը լաւ են գտել, բայց Մոսկվայի համալսարանի պրօֆէսոր Մօրկօնիկովի հետազոտութեամբ յայտնվում է, որ Սամարայի ջրանցքի ջուրը 280 կրային մասեր է պարունակում իր մէջ. իսկ գիտական հեղինակութեան ունեցող անձերի կարծիքով, եթէ ջուրը 18 աստիճանից աւելի կրային մասեր է պարունակում, խմելու համար բոլորովին անպէտք է համարվում: Պ. Պորտուգալից բնականաբար սարսափով բացականչում է. «Չէ որ այդ տեսակ ջրից սամարցիների ոչ միայն մազերը, այլ և սրտերը կը քարանան, իսկ նրանց փամփուշտները քարերով կը լցվեն: Եւ որովհետեւ Սամարայի բնակիչները օրական մօտ 300,000 վեդրո ջուր են զործածում, ուրեմն նրանք դրա հետ միասին օրական 84 վեդրո կիր են կուլ տալիս»:

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսաբնակ պ. Կօնստանտին Ալիխանով և նրա եղբայրը, որը դեռ ուսանող է, յանձն են առել ի յիշատակ իրանց հանգուցեալ հօր, Միքայէլ Ալիխանովի, կառուցանել Գօրի քաղաքի հայոց ծիսական երկսեռ զբոսայիտի համար մի երկրաչափ շինութիւն, որը կը նստի երկու եղբայրների մօտաւորապէս 5,000 ռուբլի: Արդէն շինութիւնը կառուցվում է և կունենայ 8 սենեակ, որոնցից չորսը վերելի յարկում և չորսը ստորին յարկում Վերելի յարկում կը գետեղվի օրիորդաց, իսկ ստորին յարկում տղայոց դպրոցը: Շինութիւնը կառուցվում է Գօրու հայոց աւագ-եկեղեցու բազում Գա շատ ուրախակի երեւոյթ է:

Մայիսի 31-ին, երկուսեան ժամը չորսին, Հաւդինովի բարձրաստիճանի դիմաց, Թիֆլիսի Սաղաւաթ քաղաքամասի կողմից մի ուսու սպալապան, իր սպալով, որին մի ձէ էր լծած, մտնում է Կօրը, ձիուն ջուր խմացնելու համար: Յանկարծ գետի հոսանքը սկսում է տանել սպալապանին և մի քանի րօպէից յետոյ ողորմելին անհետանում է ալիքների մէջ, իսկ ձին սպալով օգնութեանը հասած մարդիկ կարողացան ազատել:

Մայիսի 29-ին, կիրակի օր, Թիֆլիսի Հաւաբար ամված թաղում հանգիստաւոր կերպով բացվեցաւ քաղաքի մի և զատաստանի վճռով դատապարտվող անձանց անտէր մնացած երեխաների համար հիմնված ապաստարանը: Բացման հանդէսին ներկայ էր՝ իշխան կառավարչապետը և բազմաթիւ բարձրաստիճան անձինք ու տիկիններ: Այդ ապաստարանի հիմնողը դատաստանական պալատի աւագ-նախագահի ամուսինն է, տիկին Ե. Ա. Գօնչարովա: Թիֆլիսի ուսուցչէլ-գարս, սրբազան Պալադի օրհնեց հիմնարկութիւնը և ուսուցչ հոգեորականութիւնը օժեց ապաստարանի շինութիւնը ու կատարեց մարթնանքներ: Ապաստարանը, որի շինութիւնը սկսվեցաւ 1887 թվին, մեծ համակրութիւն գտաւ տեղական հասարակութեան մէջ և բազմաթիւ դրամական նուիրատուութիւններ եղան յօգուտ ապաստարանի: Շինութեան վրա ծախսվեցաւ մօտ 22 հազար ռուբլի: Այդ ապաստարանը կարող է ընդունել 22 մանուկներ երկու-սեուի Այդ մանուկները կը մնան ապաստարանում մինչև 13 տարեկան հասակը, իսկ այնուհետեւ նրանք կը տեղաւորվեն արհեստաւորաց զարգացնելու, որտեղ կը շարունակեն վայելել բանաստիճան յանձնաժողովի հովանաւորութիւնը: Հանդիսի ժամանակն էլ մի քանի նուիրատուութիւններ եղան: Ապաստարանը կուսնեայ տարեկան 1,200 ռուբլի եկամուտ, որը կը ստացվի նահանգական դատարանից: Շինութիւնը երկու յարկանի է և նրա առջև փողբիկ այդի կայ: Բանաստիճան մասնաժողովը բաղկացած է թէ

բարձրագույն անձնակազմի և թէ անդամի հա-
րուստները:

Վախճանված Ստեփան Գալիլեյի Բէզիլիոսի
ծնվեց 1817 թին, ուրեմն մօտ 72 տարեկան էր:
Նա իր ուսումը ստացել է Մոսկվայի Լազարեան
ճեմարանում: Նա ծառայութիւն մտաւ 1842 թին,
նախ որպէս վարժապետ պետական դպրոցներում,
այնուհետեւ փոստային վարչութիւնն անցաւ: Ու-
րեմն նա պետական ծառայութեան մէջ 44 տա-
րի անցկացրեց, որովհետեւ 1886 թին հրաժարա-
կան առեց ծառայութիւնից: Մօտ երկու տարի
նա մասնաւոր կեանք էր վարում և վերջին ժա-
նանակները արդէն չարունակ հիւանդ էր լինում:
Որպէս փօստային վարչութեան կառավարիչ
նա շատ լաւ յիշատակ թողեց թէ ծառայողների
և թէ հասարակութեան մէջ:

Մոսկվայի Լազարեան ճեմարանի դրամատու-
րը, ինչպէս հաղորդում է «Нов. Вр.» լրագիրը,
աւելացել է 39 հազար ռուբլով: 1) Գ. Գ. Բա-
նանով նուիրել է 10,000 ռուբլի ստիպենդիա
հիմնելու Ղզարի որբ հայ մանկների համար:
2) Խ. Ե. Ուլեյկայա կտակել է 700 ռ. չքաւոր
ուսու աղուականների որբերի համար, 3) պատ-
ւելի քաղաքացի պ. Մարիկով նուիրել է 12,000
ռ. ստիպենդիա հիմնելու որբօգոյծ եկեղեցուն
պատկանող չքաւոր ընտանիքների որդկերանց
համար, և 4) Ա. Տեր-Յակոբեան կտակել է 10,000
ռ., զօրեցոյց չքաւոր ընտանիքների որդկերանց
համար:

Ստացանք թիֆլիսում վարդանանի տպարա-
նում տպած Բաղդասարի դիր կեղծ անունով հե-
ղինակի «Մտամուրթ թափառական» անունով
գիրքը: Գրքի մէջ պատմվում է թէ ինչպէս հեղի-
նակը, որ արհեստով գրաշար է, թողնելով Կ.
Պօլիսը գաղթել, եկել է թիֆլիս: Հեղինակի մը-
տադրութիւնն է ուրիշներին չը թողնել այդպիսի
բան անելու, քանի որ ճանապարհը շատ փշոտ
է: Գրքի գինն է 25 կօպէկ:

Երկուշաբթի, մայիսի 30-ին, առաւօտեան ժա-
մը 1-ին կայացաւ իշխան Գոնդուկով-Կորսակովի
նախագահութեամբ կողմասեան Գրեպտնտեսական
ընկերութեան տարեկան նիստը: Կարգադրեցաւ
տարեկան հաշիւը, որից երկաց, որ ընկերութիւ-
նը 1 յունվարի 1888 թվականի, ունէր 7
պատուաւոր անդամներ, 198 իսկական և 18
թղթակից անդամներ. ընդամենը 223 հո-
գի: 1887 թվ. ընթացքում ընկերութեան մէջ
արժարժիկ են մի քանի աշխ. ընկնող հարցեր,
այն է ուղղման, բամբակի արդիւնաբերութեան,
չերամասնականութեան, գինեգործութեան, թէյի ար-
դիւնաբերութեան, աղաքանակութեան կողմից ցո-
րեն մատակարարելու, գինեւորական ամբարները,
Քուկայիսում գիւղատնտեսական ուսումնարանի
բացման և 1887 թվ. խորվովի ցուցահանդիսի
կողմասի բաժինը հիմնելու հարցերը: Այդ բոլոր
հարցերը ընկերութեան համար ընկերութիւնը ունեցել
12 հերթական, երկու արտաքոյ կարգի և մէկ
տարեկան ընդհանուր նիստեր: Բացի դրանից ու-
նեցել է մէկ միացած նիստ տեխնիկական ընկե-
րութեան հետ: Ընկերութեան ընդհանուր մուտքն
է եղել 13,979 ռ., որոնցից մտնված է 10,468
ռ.: Ընկերութեան հաշիւով պահվող այդգործական
ուսումնարանի տեսուչ պ. Օստապովիչ կարգաց
ուսումնարանի հաշիւը, որից երկաց, որ ուսում-
նարանում եղել են 48 աշակերտներ, որոնցից 18
վրացիներ են, 13—հայ, 12—ուսու, 3—թուրք և 2
—օտ Եւրոպ. պ. պ. վերմիշիւ և իվանով կարգա-
ցին ղեկուցումներ, առաջինը չինական տնտե-
սութեան կազմակերպութեան, իսկ երկրորդը՝ ս.
Միշիլի գինեգործական ուսումնարանում խաղող
հաւաքելու և մրդելու մասին:

Մեզ ուղարկված է հետեւեալ տպագրելու հա-
մար: «Աջի առաջ ունենալով հայ հասարակու-
թեան ջերմ ցանկութիւնը՝ մատնազիր Բաֆֆիի
գերեզմանի վրա կառուցանել պատշաճաւոր մա-
հարձան, հանդուցեալի բարեկամները՝ Ստեփան
Ջէլիսիլի, Գաբրիէլ Միրզոյան, Շիրվանզադէ, ին-
ժէնէր Գրիգոր Կիրակոսեան, ինժէնէր Ալէքսանդր
Եսայեան և նկարիչ Գեորգ Բաշինջադեան յանձն
առան իրագործել յիշեալ նպատակը Թայանիով
այս մասին «Մշակի» միջոցով կատարանում ենը
դիմել Բաֆֆիի յիշատակը յարգողներին, խնդրե-
լով իրանց նուէրները ուղարկել կամ թիֆլիսի

հայ լրագրիներ խմբագրութեանց միջոցով, կամ
անմիջապէս խմբի կողմից ընտրված զանապա-
հին, հետեւեալ հասցեով. В. Тифлисе, Габриэлю
Зурабовичу Мирзоеву, Сололаки, Садовая ули-
ца, № 42.»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԵՆՍՈՐ ՊԱՄԵՐԻ ՄԻ ՕՐԻՆԱԳԻՄ

Ամենքին յայտնի է, որ հիւսիսային Ամերիկայի
Միացեալ-Նահանգները ամբողջ աշխարհի համար
մի տեսակ ապաստարան են համարվում թէ քա-
ղաքական գործիչները, թէ կրօնական վերանո-
րողիչները, որոնք ճնշված են լինում իրանց հայ-
րենիքում, և թէ սովից տանջվող աղքատ բան-
ւորները, մի խօսքով ամեն դասակարգի և կոչ-
ման մարդիկ, որոնք իրանց հայրենիքում աջո-
ղութիւն չեն ունենում, բոլորն էլ դիմում են Ա-
մերիկա, յուսալով, որ նոր հայրենիքում իրանց
վրձակը աւելի լաւ կը դասաւորվի:

Միւս կողմից ամերիկացիները ևս, ունենալով
չափազանց հարուստ, ընդարձակ և սակաւ բնա-
կեցրած երկիր, մինչև այժմ ուրախութեամբ հրա-
ւեր էին կարգում եւրօպացիներին դաղթել Ամե-
րիկա: Բայց ահա նորերս Միացեալ-Նահանգների
սենատում առաջարկվեցաւ մի օրինադի՝ գաղ-
թականութիւնը չափաւորելու մասին: Այդ օրի-
նադի հեղինակը Միշիլիսն նահանգի սենատոր
միստըր Պաւլէն է, որը խօսեց վերոյիշեալ հար-
ցի մասին կատարեալ ամերիկական պարզա-
խօսութեամբ: Նա յայտնեց թէ, չը նայե-
լով այն հանգամանքին, որ իր ամենալաւ բա-
րեկամները և ծանօթները շատերը ծնված
են եղել Ատլանտեան օվկիանոսի այն կողմը,
սենատորը այնու ամենայնիւ այն համոզմունքի
է եկել, որ գաղթականների աղատ հոսանքը կա-
րող է աւազին թշուառութիւնների պատճառ-
դառնալ և որ ժամանակ է հարկաւոր միջոցներ
ձեռք առնել այդ չարիքի դէմ: Սենատորի կար-
ծիքով, վերջին տաս տարիների ընթացքում Եւ-
րօպայից գաղթում էին Ամերիկա այն աստիճան
այլանդակված մարդիկ, որ ընդունակ չէին բարձ-
րանալ մինչև ամերիկական քաղաքակրթութիւնը,
և հետեւաբար, կարող էին միայն փչացնել ամե-
րիկացի բանւորներին:

Վերադառնալով մօտիկ անցեալին, սենատորը
նկատեց, թէ դեռ ևս բոլորը յիշում են այն ժա-
մանակը, երբ զանազան նահանգներից կօմի-
սարներ գնում էին Եւրօպա գաղթականներին
հրաւիրելու համար: 1820 թվականից մինչև
1887 թվ. Ամերիկա գաղթեցին 15,000,000-ից
աւելի գաղթականներ—այդ 15 միլիարդ դոլա-
րից բաղկացած մի կենդանի ոյժ է: Եւ հաշ-
ւելով որ իւրաքանչիւր գաղթական բերում է
100 դոլար դրամ, կը ստանանք մէկ և կէս
միլիարդ դոլար, որոնք դրված են ամերի-
կական ձեռնարկութիւնների մէջ: Բացի բան-
ւորական և դրամական ոյժից, ասում էր սենա-
տորը, գաղթականները տուեցին մեզ առաջնա-
կարգ ներկայացուցիչներ քաղաքականութեան,
գիտութիւնների և արուեստների մէջ: Այդ բոլոր
պատճառներով գաղթականները առաջ ցանկալի
էին մեզ համար: Իսկ այժմ արդեօք նրանք ցան-
կալի են:

«Այժմ մեր երկիրը 60 միլիօն բնակիչներ և 50
բիլիօն հարստութիւն ունի. այժմ մենք կարօտու-
թիւն չունենք գաղթականների մէջ, մենք ինքնե-
րաւ կարող ենք պահպանել և պաշտպանել մեզ-
թէպէտ և դեռ ևս հարկ չը կայ բոլորովին ար-
գելել գաղթականութիւնը, սակայն այժմ և եթ
հարկաւոր է ընտրութիւն անել գաղթականների
մէջ: Մի խօսքով, Ամերիկան պէտք է դադարի
պատաստան լինել ամենքի համար, պէտք է դա-
դարի Հին-Աշխարհի համար ընդհանուր կօլօնիա»
լինել, պէտք է թոյլ տալ գաղթել միայն նը-
րանց, որոնք մտաւորապէս և ֆիզիկապէս առողջ
մարդիկ են և որոնք ընդունակ կը լինեն դառ-
նալ արժանաւոր քաղաքացիներ մեր հանրապե-
տութեան համար:

Ինչ որ վերաբերում է ընտրութեան եղանակին,
սենատորը առաջարկում է պարտաւորեցնել հիւ-
պատոսներին, որպէս զի նրանք ճիշդ տեղեկու-
թիւններ հաւաքեն գաղթել ցանկացողների վե-
րաբերմամբ և ապա արժանաւորներին վկայական
տան Ամերիկա գաղթելու համար, իսկ անարժան-
ներին մերժեն այդպիսի վկայականները:

Միւս կողմից ամերիկական բանւորներն ևս
պահանջում են, որ դադարի Եւրօպայից գաղթա-
կանութիւնը: Ունդարացին, օրինակ, կարող է
օրական երեք ցէնով աւազանանալ, այն ինչ
ամերիկացուն ամենաքիչը գոնէ 50 ցէն է հար-
կաւոր: Հետեւաբար, ունդարացին, օրական 50
ցէն ստանալով, փող է յետ դրում, այն ինչ ա-
մերիկացին հաղիւ հաղ կարող է ապրել:

Եթէ ապագայ նախագահական ընտրութիւննե-
րին պրօտէկցիօնիստները յաղթութիւնը կը տա-
նեն, այն ժամանակ շատ հաւանական է, որ Պաւ-
լէն օրինադիժը օրէնք կը դառնայ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Փարիզի «Temps» լրագիրը հաղորդում է,
որ գերմանական դեսպանութիւնը դեռ ևս չէ
վաւերացնում անցադիւնները: Եւրաս-Վօթարիւնգիա-
յով Գերմանիա դնալ ցանկացողները պարտաւոր
են իրանց ցանկութեան մասին յայտնել դեսպա-
նութեանը և երկու շաբաթ անցնելուց յետոյ
միայն դեսպանութիւնը կը յայտնէ նրանց թէ ան-
ցադիւնները կարող են վաւերացրած լինել թէ ոչ:

—Իշխան Բիսմարկ կրկին հիւանդ է չնչարգե-
լութեամբ: Վարցին եղած ժամանակ մի քանի
անգամ նա ենթակայ է եղել այդ հիւանդութեան
և Բերլին նրա վերադառնալը մասամբ բացատր-
վում է նրանով, որ նա ցանկանում է խորհրդա-
ցել իր հիւանդութեան մասին Բերլինի հռչակա-
ւոր բժիշկներին հետ:

—Հիւսիսային գործակալութեանը՝ Կ. Պօլսից
հեռագրում են, որ Թիւրքիայի Ֆինանսական դը-
րութիւնը անյուսալի է Օսմանեան բանկը հրա-
ժարվում է փոխառութիւնից, այն ինչ անհա-
րին է ունիլ տալ թէ զօրքին և թէ պաշտօնեա-
ններին Մատուր և ընկ. Նոյնպէս հրաժարվում են
միջերկրի հայթայթելուց, մինչև որ փող չեն
ստանայ:

—Թիւրքաց կառավարութիւնը արգելեց «Phare
de Bosphore» Ֆրանսիական լրագրի հրատարա-
կութիւնը Անգլիայի վերաբերմամբ աննպաստ յօ-
դուածներ տպելու համար:

—Անգլիական պարլամենտում նորերս յայտն-
վեցաւ, որ անցեալ տարի Լօնդօնում 32 մարդիկ
սովից մեռել են:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզում սկսեց հրատարակվել «Revue Scien-
tifique des femmes» անունով մի ամսագիր, որի
խմբագրիները և հրատարակիչները կանայք են:
Խմբագրական առաջնորդը յօդուածում ասված
է, ի միջի այլոց, որ այդ ամսագիրը կօւր օրվան
չէ լինելու «Գիտութեան հողի վրա մեր իրա-
ւունքները չեն վնասվում: Ուսումնարանների
ղեկները լայն բացված են կանանց առաջ, պրօֆե-
սորները շատ մերով ընդունում են մեզ, նրանց
կողմից որ և է անարդարութեան զոհ չենք հա-
մարում մեզ, մեզ երբեմն մինչև անգամ արտօ-
նութիւններ են տրվում»: Այդ առաջաբանի վեր-
ջում կարգում ենք. «Տղամարդիկ, առանձին վերց-
րած, աւելի լաւ են, քան թէ առհասարակ կար-
ծում են: Եթէ յաճախ մեղադրվում են նրանք
անարդարութեան մէջ, դրա միակ պատճառն այն
է, որ տղամարդկանցից շատերը ծածկում են ի-
րանց լաւ յատկութիւնները, որպէս զի համաձայն
գործին նրանց հետ, որոնք իրանցից վատ են
կարելի է ասել, որ տղամարդիկ հաւատարո-
թիւնը, արդարութիւնը և բարեսրտութիւնը մի-
տեսակ պակասութիւն են համարում և աշխա-
տում են ծածկել այդ յատկութիւնները և որ նը-
րանք պատիւ են համարում աւելի վատ երեւալ
քան թէ նրանք են իսկապէս»:

Սլաւոնական խնամակալ-թագուհին հրաւիրեց
Միացեալ-Նահանգներին նախագահ Կլէմէնտին
ներկայ գտնվելու Խրիստափոր Կոլոմբոսի արձա-
նի բացմանը, որ տեղի է ունենալու Մարիբուրգում
յուլիանին:

Խաղաղութեան և ազատութեան միջազգային
լիգայի կօնգրէսը այս տարի կը կայանայ Նիշա-
տելում, սեպտեմբերին: Կօնգրէսի պրօգրամայի
մէջ կան ի միջի այլոց և հետեւեալ հարցերը.
պատերազմի իրաւունքի մասին, կրթութեան մի-
ջոցով խաղաղութիւնը հաստատելու մասին, հա-
մախարհային կօնգրէսի մասին 1889 թվ. փարի-
զի ցուցահանդիսի ժամանակ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏՈՒՄՈՐԻ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԳՐԱԿԻ, 31 մայիսի: «Новое Время» լրա-
գիրը հաղորդում է, որ Մացեվսկի ընկերու-

թեան գործերը ընկելու համար մի առանձին
յանձնաժողով է նշանակված՝ դներաւ-աղիւտանտ
Գլինկա-Մալիւնից, չտալմէյստէր՝ գներաւ-աղիւտ-
նանտ Սկալօնից և սենատի օրէր-պրօկուրօր Նէկ-
լիւօվից:

ԲԱՆԻԱՆՈՒԿԻ, 31 մայիսի: Այստեղ հասաւ աւ-
ստրիական թագաւաւազը իր ամուսնու հետ
Բօսնիա տեսնելու համար:

ՓԱՐԻԶ, 31 մայիսի: Շարանտի դէպարտամեն-
տում լինելի պատգամաւորական ընտրութիւննե-
րը ի նկատի ունենալով, որ պէտք է քուէարկվի
բուլանտեան կանդիդատ Գերուէդ, ընտրութիւն-
ների համար պատրաստութիւններ սկսվեցան Ան-
գուէմունտ Պրինց Վիկտօր Նապօլէօն ուղարկեց
այնտեղ մարշալ Կանրօրէրին, որպէս զի այս
վերջինը համոզէ բժնապարտեան ընտրողներին
ձայն տալ Գերուէդի դէմ Գերուէդ այսօր մե-
նամարտ ունէր Արէնօի հետ, որը եկել էր նոյն-
պէս գործելու նրա դէմ Արէնօ թեթեւ կերպով
վերաւորված է:

ՊԵՏԵՐ, 31 մայիսի: Երէկ, դահական ծառը ար-
տասանելուց յետոյ, աւստրիական կայսրի մօտ
ժողով կար, որ ներկայ էին մինիստրները և դէ-
լէգացիայի անդամները: Կայսրը խօսակցելով շա-
տերի հետ, հաստատ յոյս յայտնեց խաղաղու-
թեան պահպանութեան համար և ասեց, որ դէ-
լէգացիայից խնդրվող կրէդիտը զօրքը լրացնելու
համար է. այլ ևս ուրիշ կրէդիտների համար
հարկաւորութիւն չի լինի:

ԲԵՐԼԻՆ, 31 մայիսի: Կայսրի մօտ ջերմը նո-
րոգվեցաւ: Երէկ կայսրի կողմից գրեցին ար-
ժաթէ նոր խողովակ:

ԲՈՍՏՈՎ (Գօնի վրա), 31 մայիսի: Գատառասնա-
կան պալատը, ընկելով օգոստոսի 8-ին 1887 թվ.
պատահած փողոցային անկարգութիւնների գործը,
դատապարտեց Խաբարովսկին Սերիւր աքսորե-
լու, գրկելով նրան իրաւունքներից, իսկ 17 մե-
ղադրվածները բանտարկութեան դատապարտվե-
ցան զանազան ժամանակամիջոցներով, ոմանք
գրկվելով իրաւունքներից, իսկ ոմանք ոչ: Կրօդ-
նեցով վաճառականներ, որը մեղադրվում էր դէպի
անկարգութիւնները զրդելում, և մնացած 27 մե-
ղադրվածները արդարացրած են:

ՊՕՏՄԻԱՄ, 31 մայիսի: Կայսրի նշառութիւնը
աւելի զգուշացրեց է, թուրքիւնը աւելացել է:

ԲԵՐԼԻՆ, 31 մայիսի: Չը նայելով այստեղի
բօրայի թոյլ տրամադրութեան, ուսուց կրեդի-
տական ռուբլին այսօր բարձրացել է իր գնի
մէջ: Գա պայմանաւորվում է այն հանգամանքով,
որ այսօրվայ ուսուց ամսական լիկվիդացիայի հա-
մար առնվեցան նշանաւոր քանակութեամբ ուս-
ուց դէվիզներ: Ռուսաց բանկերի մեծամասնու-
թեան պօրտֆելում, ամսվայ ընթացքում, դիվի-
ցան նշանաւոր քանակութեամբ վէկսներ, որոնք
այժմ պիտի թափվին: Ուրիշ կողմից ուսուց հա-
ցահատկները արտահանութիւնը դէպի օտար եր-
կիրները շարունակվում է նոյն քանակութեամբ և
այդ պատճառով պահանջ է զգացվում առձեռն
(նաղը) դրամի:

ՊԵՏԵՐԳՐԱԿԻ, 1 յունիսի: Երէց քաղաքում բօրսա
հիմնելու համար Բարձրագոյն հրաման տրվեցաւ:

ԽԱՐԿՈՎ, 1 յունիսի: Այստեղի «Երմիտաժ»
հիւրանոցում սակիօյաթի չուանով կախվեցաւ
կոմսուհի Տիշկէվիչ. նրա մօտ գտան մի քանի
հազար ռուբլի փող և շատ բրիլիանտներ: Անձնա-
պահութեան պատճառների մասին ոչինչ գրու-
թիւն չը կայ: Կոմսուհին եկաւ այստեղ հարա-
ւից:

ԱԹԵՆԻ, 1 յունիսի: Յունաց թագաւորը յունի-
սի 25-ին Պետերբուրգ է ուղարկվում Զէրնօգօրի-
ական իշխանուհիներ՝ Անատատիա, Միլիցա, Ե-
լէնա և Աննա երէկ ճանապարհ ընկան դէպի ար-
տասանման:

Ս. ՊԵՏԵՐԳՐԱԿԻ ԲՈՐՈՍԱ

Մայիսի 31-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արմէ	113 ռ. 15 >
Համբուրգի վրա 100 մարկ —	55 > 70 >
Փարիզի վրա 100 ֆրանկ —	44 > 80 >
Ոսկի — արմէ —	9 > 18 >
Մաքսային կուպօններ —	182 > 39 >
Արծաթ —	1 > 39 >
Բօրսային դիվիզներ —	61 3/4 71 3/4 >
Պետական 5% տոմս 1-ին շրջանի 99 > 12 >	
— — — — — 2-րդ —	98 > 27 >
— — — — — 3-րդ —	98 > 35 >
— — — — — 4-րդ —	99 > — >
— — — — — 5-րդ —	98 > 50 >
— — — — — 6-րդ —	— > — >
Նոր 4% փոխառութիւն	82 > 75 >
Արեւելեան 5% փոխառութ. 1-ին շրջ. 100 > — >	

